

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 սեպտեմբերի 2019 թվականի N 127 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364- Ա հրամանը՝


որոշում եմ.

1. Հաստատել 2019 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 16-ի N 01/17.1/107-17 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:
3. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս, անհրաժեշտություն առաջանալու դեպքում, աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Դիլիջան համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
5. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ 2019 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել իրականացված հսկողության արդյունքները:

Հ. ՉՈՒԱՆՅԱՆ

27.09.2019

X 



27 սեպտեմբերի 2019թ.
ք. Իջևան

2019 թվականին Հայաստանի Հանրապետության Տափուշի մարզի Դիլիջան համայնքում իրականացվելիք իրականացնող հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող աշխատատար անձիք	
				Ջբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Դիլիջան	հոկտեմբեր- նոյեմբեր	բնապահպանություն առևտուր և զբոսաշրջություն արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն ՏԻՄ պարտադիր լիազորություններ և ոստիկանություն Ֆինանսներ քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն հողաշինություն և հողօգտագործում կրթություն և մշակույթ առողջապահություն, Ֆիզիկական կուլտուրա և սպորտ գյուղատնտեսություն և անասնաբուծություն տրանսպորտ և կապ քաղաքացիական ակտիվի գրանցում սոցիալական պաշտպանություն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Սամվել Սուքոյան Հայկ Փաշինյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Միսակ Մելքումյան, Արմեն Ծաղարյան Համետ Փիրումյան Հասմիկ Խաչատրյան, Մարինե Խաչատրյան Ռուբեն Տիգրանյան Արթուր Վանեսյան Արկարի Ամիրխանյան Արտավ՝ Սարգսյան Գագիկ Մելիքբեկյան Հարություն Քոչարյան, Նարինե Ծաղարյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

